

Ե Ս Տ Ղ Ի Կ Ե Ր Ե Ի Ե Լ Ե Ե Ն

Փ Ր Ա Գ Ի Ք

Բ Ե Ր Ո Յ Ե Կ Ե Ն ,
Բ Ե Ն Ե Ս Ի Բ Ե Կ Ե Ն ,
Տ Ն Տ Ե Ս Ե Կ Ե Ն Ե Ի Բ Ն Ե Կ Ե Ն

Ա Տ Ն Ա Ր Ի , Թ Ի Ի 4 .

1855

Ը Պ Ր Ի Լ 1 .

Բ Ե Ր Ո Յ Ե Կ Ե Ն

Թիւ ԻՆճԿԵԱ զիտար է մօտաւ իր երկուստայտարութեան հոտակիւ մէջ Դարձից :

ԱՆԴՆՍ իր պատանեկութեան հասակին ելլելով , երբոր երիտասարդուն աշխոյժ հասակին դռնէն ներս կը մտնէ , իր մարմնոյն ամէն զգալ յարմարները աւելի կուժովնան , դէպքին վրայ մէկ վեհանաճական ուղի մը կը նշմարի , չարժուածքն ու քաղվածքը կը կանոնաւորի . խելքը կը հասունայ , եւ իր ամէն մէկ զործքերը ազէի կարգաւորութեան տակ կը մըտնէ , մէկ իտարով , մարդու թէ մարմնոյն եւ թէ հոգւոյն կարողութիւնները

րը առ միջոցիս ու ամէն ետեւ կատարեալ կը սեղմին :

Արեւիցէ երիտասարդ իր կենացը մէջ կատարեալ մարդկութիւն ստանալու եւ աշխարհի վրայ երջանկաբար տպւելու համար տէտք է իր պատանեկութեան թարմ հասակէն սկսի իր ունեցած պակասութիւնները մեծ ջանքով ու սիրով քիչ քիչ շտկել , նման ան պարտիզացանին որ դարնան ատեն իր պարտեղին մէջի ունեցած ամէն ծառերուն ու տունկերուն եւս սոյն ամէն տէտք եղած դարմանները

որովհետեւ անանկ պատուոյս դպաւ
որ չի կրնար ըլլալ . վեց կանգուն կեր-
պաս ապառիկ տալ չուզեց ինծի . ե-
րեւելի մարդոց բոլոր սրտով կուտայ
թէ պէտեւ կորսընցընելն ալ գիտնայ .
պարկեշտ գեղացիի մը բան տալ չու-
զեր ուրիշ երբեք միտս չբաշէր . ա-
նիծայ հրէան Աստուած պատմէ :

Ասոնք մտիկ ընելէս ետքը ըսի աս
մարդուն , բարեկամ ադ քու ըսած
մարդդ ինչ բնութեան տէր է . շատ
գէշ և արծաթասէր մարդ մըն է . ա-
սիկա առաջ հրէայ էր ետքը քրիստոն-
եայ եղաւ բայց ՚ի ներքուստ նոյն
հրէան է ըսաւ : Խանութէն դուրս
ելածիս պէս Սամուէլ Սիմօնին եղած
տեղը հասկնալու համար , սկսայ փըն-
տըռել . երբոր անոր խանութը ցը-
ցունցին ինծի աչքս չորս դին պտրու-
ցունելու ատենս շուտով մտքիս մէջ
աս օգտակար սատանութիւնը ծնաւ .
չուտ մը վազեցի պատրաստ լաթ ծա-
խողի մը խանութը գացի ու աս հան-
գերծները ծախու առի որ մէկը դա-
տաւորի , մէկը գրագրի , մէկն ալ զօ-
րակսնի հագուստ է : Ո՛հ սիրելի բա-
րեկամս , պօռաց Տօմ Ալֆօնսը , աս
տեղ ուրախութեամբ լեցուած , աս
ինչ ճաշխարհիկ խելք . չիտակը ասոր
վախճանը շատ գովելի պիտի ըլլայ ,
և աս գործին մէջ քեզի օգնելու հա-
մար երկու հոգի պէտք է . դուն ա-
ղէկ դատաւոր կ'ըլլաս ես ալ գրա-
գիր , աս մեր բարեկամն ալ զօրական :
Աս բանը լմնցաւ . վաղը աս խաղը խա-
ղալու կելանք , և կը յուսամ որ շատ
աղէկ պիտի ըլլայ . վերջապէս ցորեկ-
ուան դէմ իրենց կեղծեալ հագուստ-
նին հագած անտառէն դուրս ելան
Քսէրվա երթալու համար , ուր արեւ-
ուն մոնալու ժամանակը իրենց դոր-
ծին պիտի սկսէին . երբոր ժամանակը
հասաւ ձիերնին իրենց ընկերներուն
մէկուն ձգեցին ու երեքնին գա-
ցին :

Նախ և առաջ Սամուէլ Սիմօնին
խանութին մօտերը եղող պանդոկա-
պետի մը՝ դատաւոր եղողը դարձաւ
ըսաւ , պո՛րոն , քեզի հետ առանձին
տեսնուիլ կուզեմ : Պանդոկապետը
ասոնք առանձին տեղ մը տարաւ ուր
Ամպօսաղ ըսաւ անոր . « Ես հոգեւոր
դրան կողմէն պաշտօնակալ մըն եմ » .
աս խօսքը ընելուն պէս պանդոկապե-
տին երեսին գոյնը նետեց , ու դուա-
լով ըսաւ . Տէ՛ր իմ յանցանք մը ըրած
չեմ որ դուռը զիս փնտրուէ . պա-
տասխանեց Ամպօսաղ ալ , դուռը
ձեզի հետ գործ մը չունի . Աստուած
չուզեր որ չարին հետ թայն ալ երի .
իրաւ անաչառ է բայց միշտ արդար
է . ես քեզի համար Քսէրվա եկած
չեմ , բայց Սամուէլ Սիմօն անունով
վաճառականին համար , որ շատ գէշ
հասկցունցին մեզի ու կրսէն որ իր բա-
նին ելելուն համար քրիստոնեայ ե-
ղեր է , բայց ՚ի ներքուստ նոյն հը-
րէան է :

Աս հոգեւոր դրան կողմէն կը հը-
րամայեմ քեզի որ աս մարդուն վրայ
ինչ որ գիտես նէ զուրցես , չըլլայ որ
բան մը պահես ինձմէ , որովհետեւ
դրացիդ է կամ կրնայ ըլլալ որ բարե-
կամդ ալ ըլլայ . ու երբոր խօսքերուդ
մէջը քիչ մը կեղծիք տեսնալու որ ը-
լամնէ ինքզինքդ չես կրնար ազատել .
աս ըսելով դարձաւ Տօմ Ռաֆայէլ
ըսաւ . գրագիր գործիդ սկսէ : Գրա-
գիրը թուղթն ու գրիչը ձեռքը առ-
նելով նստաւ սեղանի մը առջին ու
պատրաստուեցաւ ծանր կերպով մը
գրելու պանդոկապետին նկարագրու-
թիւնները որ ան ալ իր կողմէն խոս-
տացաւ չիտակը զուրցելու . կեցի՛ր
աս տսանկ ըլլալէն ետքը , ըսաւ դա-
տաւորը , միայն իմ ըրած հարցում-
ներուս պատասխանը տուր . ալ ասկից
էվել բան մը չեմ ուզեր . Սամուէլ
Սիմօնը եկեղեցի շատ կերթայ մի-
ադ բանը նկատած չունիմ , ըսաւ

այն այոջափ գիտեմ որ երբեմն իր սենեակը կը քաշուի ու հոն երկար ժամանակ պարասը կը կենայ . ո՛հ ուր դածա ալ աս է , պօռոց դատաւոր , գրէ՛ գրագիր որ շաբաթ օրերը ամէնեւին գործ չգործէր . մէկ բան մը մնաց հարցունելիքս , ան ալ ըսէ նայիմ , Վասպար արդեօք Նշուսաղէմի վրայ ալ կը խօսի՞ մի . այո՛ , շատ անգամ մեզի հրէայներուն պատմութիւնները կընէ . մեծ գրերով գրէ՛ , գրագիր , որ Սամուէլ Սիմօն գիշեր ցորեկ ազգին վերականգնիլը կը բաղձայ . ալ հերիք է ճշմարտախօս Վասպարին զուրջածները մէկ հրէայութիւն մը այրելու կ'օգտեն :

Ըստեք ըսելէն ետեւ դատաւորը պատուիրեց մանչուն որ եղած գայածը չըլլայ որ տիրաջը բանայ :

Իրենք իսկոյն Սամուէլ Սիմօնին տունը գացին , որ զարմացաւ աս երեք անձանաչ մարդիկը տեսնալով :

Ըմպռօաղ վեհանձնութեամբ մը , ըսաւ անոր , Պ . Սամուէլ Հոգեւոր Վրան կողմանէ կը հրամայեմ քեզի , ուրուն պաշտօնեան եմ , որ հիմա քու մթերանոցիդ բանալին ինծի տաս . վասն զի կուզեմ տեսնել թէ արդեօք քեզի համար մեզի եկած գանգատները արդարացունելու մէկ գործ մը կայ մի : Վաճառականը շուարեցաւ մնաց , և առանց դէմ դնելու բանալին անոր յանձնեց :

Կեղծեալ դատաւորը ներս մտնալով , ըսաւ , դուն հիմա սենեակէդ քաշուէ որ իմ գործս կատարեմ :

Սամուէլ ասոր ալ հնազանդեցաւ : Ըստեք իսկոյն մէկ երկըթէ սնտուկ մը բանալով մէջի բոլոր ստակները թալլեցին . ուղածնին կատարելէն ետքը կեղծեալ դատաւորը իր փակաղաղովը դուռը կը պելէն ու կնքելէն ետեւ , ըսաւ , կը պատուիրեմ քեզի Հոգեւոր Վրան կողմանէ որ չըլլայ թէ աս փակաղաղին գւ կնքելն դպչիս , վաղը

աս ժամանակ պիտի գամ քեզի ուրիշ հրամաններ բերելու :

Խեղճ վաճառականը քանի մը օր սարսափելով , Հոգեւոր Վրան ուրիշ հրամաններուն սպասելէն ետեւ , բանին ինչ ըլլալը իմացաւ . ու շատ ամիսսաց իր անխելքութեանը վրայ որ առանց մտածելու անոնց շինծաւ խօսքերուն կուրօրէն հնազանդեցաւ , բայց ինչ օգուտ բանը բանէն անցած էր :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Եփիղատսի մէջ մեռելոց քննութիւնը :

Հին ազգաց մէջ աւելի երեւելի ու պանծալինեղուն առաջինը հանդիսացած է Եփիղատացոց ազգը , որ թէ՛ քաղաքականութեամբ և թէ՛ ուսմամբ այնչափ ծաղկած էր , որ ուրիշ ազգերէ փրկխօսիայ մը մինչեւ ^{որ} Եփիղատոս ճանապարհորդութիւն չընէր ու հոն երկար առտեն չի մնար , իւր գիտութիւնը տակաւին կատարելաւ գործած չէր համարուէր : Եւս ազգը իր ժողովուրդին կիրքերը սանձելով զանի քաղցր առաքինութեան ճամբուն մէջ կառավարելու և առաջնորդելու նպատակաւ շատ միջոցներ ու կանոններ հաստատեւ էր , որոնք մինչեւ ցայսօր մարդս խիստ կը զարմացնեն՝ և որոնցմէ մէկն է մեռելոց վրայ եղած քննութիւնը :

Մեռեալը թաղման տեղը տանելու համար լիճ մը կար , ուրկէ պէտք էր անցնել , և որուն եզերքը զանի վար կը դնէին ու կըսէին անոր . « Ո՛վ պէս նէ քու հայրենեացդ քու գործքերուդ համարը տուր , ի՞նչ գործեցիր կենդանութեան ատենդ . օրէնքը քեզի կը հարցնէ , հայրենիքը մօտիկ կընէ , և ճշմարտութիւնը կը գատէ » : Ըն առտեն առանց աչառելու մեռելոցն պատուոյն ու զօրութեանը գործած

առաքինութիւնները ու մտութիւնները կը քննէին : Հոն՝ ըրած յանցանքները և այն ամէն բաները, զորոնք վարկու մն ու զօրութիւնը թաքուն կը պահէր, իրենց վրայի քողը կը մերկանային : Հոն, այն՝ որուն անմեղութիւնը նոյն մեռնող մարդը աւրտաւորեր էր, իւր պատիւը պահանջելու կուգար : Անորին ապահապալաքացւոյն պատիժ վատանունութիւնն էր, իսկ առաքինին հրապարակական գովեստներով կը պսակուէր, ու աւսիկա հռչակելու պատիւը ազգականներուն պահուած էր : Անոնքն Գերդաստանը կը հաւաքուէր, տղայք հօրերնուն ընծայուած գովեստներէն առաքինութեան օրինակ կ'առնէին . ժողովուրդը գունդագունդ հոն կը դիմէր և այս հանգէսին նախագահ դատաւորը կ'ըլար : Յետոյ այն՝ որ արդար և անմեղ էր, իւր մոխրոյն առջև կը գովուէր : Կը յիշուէր այն տեղերը, այն վայրկեանները ու այն օրերը, ու առաքինի գործքեր ըրած էր : Սարգոյ և հայրենեացը ըրած ծառայութենէն շնորհակալութիւն կը մատուցուէր, և աոոր օրինակը մնացորդաց կ'առաջարկուէր : Անոնքանը կը վերջացնէր իւր ճառը մեռելոց դաժան աստուածը օգնութեան կոչելով, ու մեռեալը իբր թէ ամենակարող Աստուծոյ զօրութեանը յանձնելով, կ'աղաչէր որ թողու զանի այն խաւար ու անձանօթ երկրին մէջ, ուր մտեր էր :

Վերջապէս զանի հոն ձգելով անոր և ժողովրդոց հրաժարական ուղոյն կը արուէր : Բոլորաս մանաւանդ այսպիսի ծանրաբարոյ և անաչառազգի մը մէջ, կրօնական ու բարոյական սրբազան գաղափարներ խորին կերպով կ'աղգէր : Տարակոյս չկայ, որ այս գովեստները մոռցուէին ու ջնջուէին առաջ մարդոյս հոգւոյն վրայ սաստիկ տալառութիւն մը կրնէն : Այս գովեստ

ներուն կերպը, ընդհանրապէս տալառական ճառերուն պարունակածին հետ շատ նմանութիւն ունէր, բայց մեծ տարբերութիւն մը կայ, վասն զի անոնք առաքինութեան ընծայուած էին և ոչ պատու : Այսին ու արհեստաւորը աս մասին մէջ թագաւորին ունեցած իրաւունքը ունէր : Ասիկայ ընդունայն հանգէս մը չէր, ուր անկարծելի ատենաբան մը ելար և իրեն անգամ կ'ասկածելի երեւցած առաքինութիւններու վրայ ճառեր, ու չանայր և ճգնէր վայրկեան մը սիրելի երեւցնել զինքը անոր, որ երբեմն իր և հասարակութեւ արհամարհանաց և ատելութեան նիւթ եղած էր, և ճարտարութեամբ վարձաւորական սուտէր դիպելով մեռեալը երկար ատեն շողքօրթեր, ինքն ալ փոխադարձաբար գովութիւն ստանալու կամ վարձատրուելու նպատակաւ : Ան ատենը անգութ զօրապետը իբր մարդասէր չէին գովէր, և ոչ կաշառակուռ դատաւորէ, իբր անչահախնդիր . ամէն բան պարզ ու ճշմարիտ էր : Անծառայողք և իշխանք իսկ միւսներուն պէս քննութեան տակ էին, և միայն եթէ արժանաւոր ըլլային կը գովուէին : Ճշմարիտ է թէ մահը շողքօրթութեան ու մեծատանց մէջտեղ անջրպետ մըն է, և թէ ճշմարտութիւնը կրկսի ու զօրութիւնը կը դադրի : Յայտնի է պատմութիւններէն, որ Ագիպտոսի թագաւորաց շատը, որոնք իրենց հը պատակները կը հարստահարէին այն մեծամեծ բուրգերը կանգնելու համար, օրենքէն դատապարտուեցան ու նոյն իսկ իրենց կառուցած շիրիմներէն դուրկ ու թափուր մնացին : Բայց իրենք հազար տարիի չափ կայ, որ այս սովորութիւնը վերացուած է, և աչխարհիս մէջ չկայ անանկ տեղ մը, ուր թագաւորաց և մեծամեծաց կենաց ընթացքը քննելու համար դա

տաւոր հաստատութեամբ ըլլայ : Բայց
այս ատենանին պաշտօնը՝ համբաւը կը
կատարէ հիմայ , որն որ աւելի սու-
կալի է . վասն զի հնար չէ զանի եղ-
ծել . անիկայ կը վճռէ , ասպագան կըն-
դունի և պատմութիւնը կարճանադ-
րէ :

Ա Ռ Ա Կ

Կատու եւ Մուկ :

Անտէր կատու մը անօթի .
Սիրաք կտորած կը պրտորի .
Մէկուն խորհուրդ տալ չուզելով ,
Զինք կը մահէ համբերելով :
Կեղայ կերթայ մըսագործին .
Հունչը կտորած կ'վազէ ուգիլին .
Միեաւ միեաւ կողաղակէ ,
Մըսին վըրայ թաթ կըլարնէ :
Մարդն ալ անոր խիստ բարկացած ,
Բիտա միտա կընէ . մայր մը բարձած .
Խեղճ կենդանայն լեղին կ'պատուի ,
Դուրս կըլիախի դադրած հողնած :
Աս ինչ անգութ սիրտ է կըսէ .
Մարդկանց ոգին մեղնէ չար է :
Ան կընայի որ ճար չըկայ ,
Ասոր վերջը վատ մահ մը կայ ,
Կը վազվազէ ասդին անդին ,
Կարօտելով չորցած հացին ,
Դեմը կ'եկայ պառաւ մուկ մը ,
Կը բարեւէ խեղճ ձայնով մը :
Մէկ մ'ալ նայիս ան ալ վախէն ,
Կատուին դայը տեսած մէկէն .
Չարին ձայնէն կը դողբըղայ ,
Մահուան դուռը կ'երթայ կուգայ :
Վայ ինձ կ'ըսէ ինչ է ծրգտի ,
Մըտքէն կ'ըսէ հողիդ քախուի .
Ո՛հ կը ողբամ և կը ցաւիւն ,
Ես քու վերայ մեծ գութ ունիմ :
Առիւծի պէս քու լորուծիւնդ ,
Մեղ թագ պարծանք քու տէրութիւնդ .
Ո՛՜՜ սիրելիս ինչ ես եղեր ,
Միտք է հալել կաշիդ մնացեր :
Աղքատ կատուն կ'պատմէ անոր ,
Իր խեղճութիւնն ւ'արկածք բոլոր .
Անոր կ'ըսէ շատ աւել գիտես ,
Որչափ ըլլայ քուն պառաւ ես :
Յուշուր ինձի հարուստ տեղ մը ,
Որ ձեզ չ'ըլլամ ծանր բեռ մը ,
Քանի ալ եմ բոլորովին ,
Աղաղութիւն մըլանց սեռին :
Թէ մեռցնեմ ընտաւ մեռի մը ,
Կամ ապր անոր մէկ մեծ վերք մը ,

Երգում կընեմ ձեռքս քաշուի ,
Կը հաստատեմ ստրկս կտորի :
Ո՛հ , կ'ըսէ անխելք պառաւը ,
Ինչ երջանիկ միւր թռչնէրը ,
Պիտի տեսան տղէկ օրեր ,
Վայ ինձ կ'ըսէ օրերս շար էր :
Եւր դընս ո՛վ սիրելի ,
Սա մեծ տունը մըսով է լի .
Եղիկ մեղրիկ հոն տեղը կայ ,
Բան մը պահատ բընաւ չը կայ :
Խելթին հաւնած աէգ փըթտածը ,
Չը գիտնայով հաւտացածը ,
Ցատկը տեղով խաղ կանչելով ,
Կ'եկայ կ'երթայ թռչնէրուն քով :
Պարծենայով անոց կ'ըսէ ,
Իր խեղճութիւնն բան մը կ'կարծէ .
Աղաղութեան ըւր մը բերի ,
Թաղ ամէն մուկ անհագ չըջի :
Տանալիին մը ատնց մեջէն ,
Կ'ըսէ անոր իր խընտու մէն .
Իրան կ'ըսէս աչքդ խաղայ .
Քան վնչ մեղայ շատ զարմացար :
Մէյ մ'ալ նայիս խարդախ կատուն ,
Միտքն ինչալով իր արհեստն բուն .
Հտեմարանին քով կը նրտի ,
Նենգեալ միտք կը կըծկրուի :
Հոն կ'ըստես իրեն բազդին ,
Սիրտն կը հատնի անօրինին ,
Մէյ մ'ալ պառաւ անխեղ մը ,
Որ չէր վախնար մէկ տեղէ մը ,
Հոն տեղ կուգայ կերակուրի :
Որ իր տղայը առնէ տանի ,
Եղեւնագործը թռչնոյ նման ,
Կը յարձրիկ շուտով վրան ,
Չաքաղելով կը մեռցնէ :
Աղաչանքին խիղճը կ'դոցէ :

Քանի քանի միամտներ ,
Ան մըկան պէս շուտ են խորուէր ,
Զգոյշ կեցիր չար մարդոյմէ ,
Նայէ ըլլան հեռու քեներ :

ՊԼԵՄՈՒԹԻԻՆ

Կորուսած տղայ մը :

Օբոսանքի համար գետինը կը
հերկէր , կը ցանէր ու կը հնձէր ,
որով տանն ալ մեծ նպաստ մը կը-
լար : Հատ անգամ Ի ծնողաւ կեր-
թար , որն որ իւր տունէն երեւոյն
մղան հեռու կկնար ըստ ամենայնի

իւր գործերը կարգադրելու :

Չմեռուան ատեն փետրուարի մէջ ջերը տաքուի սրահին մէջ նստած ատեննին, « Հայրիկ, » ըսաւ պզտի Եղուարդը, « կը բարեհաճիս այս գիշեր մոգական լտպտեր ըսուածը մեզի ցուցունելու » :

« Անշուշտ », պատասխանեց հայրը ձեռքի լրագիրները վար դնելով, « և սոսի իրիկուն ալ ամէն իրիկունէն յարմար է » :

Այսպէս զանգակը զարնուեցաւ, ու Յակոբոս ծառային ըսին որ կանթեղը, տուփը, և ճերմակ սաւան՝ մը քերէ, որ լցար ու ստուերը վրան զարնէ . բոլորովը կրակի հովանի մը շինէ, և ամէն բան պատրաստ եղած ատենը կանթեղը դուրս տանի : Բայց այս հրամանները ըլլալէն ու խաղը սկսելէն առաջ, ճամբուն վրայէն մօտէն անխնեւու ձայն մը լսուեցաւ :

Եյն միջոցին տանը դրանը առջև կառք մը մէկէն ՚ի մէկ կայեցեալ, և ջուսով մէկը Պ. Սիդօնին լուր բերաւ, որն որ ան ալ որահը թողուց գնաց : Երբոր ներսը անոր դարձին կ'սպասէին, տիկինը պատկերազարդ գիրք մը քացաւ իւր փորթիկ աղաքը զբոսցնելու համար : Պ. Սիդօնը մինչեւ որ ներս եկաւ նէ ժամ մը տեւեց, և իւր ճակատին վրայ պատած մթու թիւնը, երեսին այլայլութիւնը, իր յայտնէին թէ գէշ լուրեր առած պիտի ըլլար : « Ո՛վ էր Հիւրդ, » հարցուց տիկինը :

« Պ. Պրուքս, բաժանորդս էր », պատասխանեց Պ. Սիդօն :

« Պ. Պրուքս, ուրեմն գիշերը հոս պիտի մնայ, և ՚ի հարկէ բան մ'ալ չէ կերած . թէ որ դուն արգէն չես ըսած նէ, զրուցեմ որ կերակուր պատրաստուի » :

« Այ, » ըսաւ Պ. Սիդօն. « Անաս գիշեր Ա ծնուա պիտի գառնայ » :

3 Չորհաֆ :

մենք մնաս բարոյնիս ըսինք և ինքը հիմա կառքին մէջն է : » Աս խօսքերը դեռ չէր լմացած, որ ատեն կառքը բացուած արագութեամբ կերէ թար :

« Ենտուայի մէջ ի՞նչ եղեր է, » հարցուց տիկինը ցած ու մեղմ ձայնով մը : « Հատ բան մը չէ » պատասխանեց երկը : Երաւ հարկաւոր բան մը չի կայ, ուրեմն ուրախ եղիք սիրելի » :

« Գէշ լուրը սա է որ, մէկ քանի օրէն քաղաքը իջնալու եմ » :

« Բաղա՞րը մի, ուրեմն աղէկ գիտեմ որ գէշ բան մը ըլլալու է, շարունակեց կինը . սիրելիս, թէ որ գէշ լուր մը առիր նէ, ինձմէ մի պահեր . աղէկ գիտես որ ի՞նչպէս հանդարտ կերպով կը տանիմ այս տեսակ բաները » :

« Դուն իմ բոլոր վստահութեանցըս արժանի կ'ին մնես », կրկնեց Պ. Սիդօն : Բայց հագիւ թէ կրնամ » հիմա իմ այս յանկարծական ճամբորդութեանս պատճառները քեզի խնայել : Վախնալու բանը սա է որ, մեր Անտուերբի մէջ ունեցած պաշտօնատարներնիս գործերը շատ գէշ կը տանին կոր եղեր, և հարկաւոր է որ մենէ մէկը շուտով երթայ անոնց գործքերը կարգադրելու : Հիմա ալ երկար չեմ կրնար խօսիլ, վասն զի թէ և մենք հաւատարմութիւններնուն կասկալ ձեւու պատճառ ունինք, բայց առնոց գէմ ամբաստանութիւն բերելու պատճառ չունինք » :

« Բայց սիրելի Սիդօն » ըսաւ իր խռոված կինը . ասիկա անակընդ միալ բան մըն է . Պ. Պրուքսը չի կրնար երթալ » : « Աղէկ գիտես որ, շարունակեց կինը իւր արցունքներովը մեկտեղ ժպտելով, անիկա ո՛չ կնիկ, և ո՛չ տղաք ունի ձգելու » քեզի պէս : »

« Իրան է , սիրելիս , ըսաւ Սիդօն ,
 » և երանի թէ ան ալ քեզի պէս սի-
 » ըելի ու երջանիկ կին մը ունենայ ,
 » բայց ադ բանը չի կրնար բլալ : »

» Ըն իր անձկութիւնը յաջողու-
 » թեան համար պիտի ցըցունէ ալ-
 » ներեւ , և ասկէ զատ անիկա Սիդօն
 » ռայի մէջ պէտք է , ուր առանց ա-
 » նոր բան մը աղէկ չեթար , և ուր
 » ես անոր տեղը չեմ կրնար բռնել :
 » Եկու եկու , ըսաւ , զուարթ ձայ-
 » նով մը . աս պզտիկ ծովային համ-
 » բորդութիւնը մէկ զարհուրելի բան
 » մը չէ , մէկ կամ երկու շաբաթէն
 » ետքը կրկին հոս եմ : »

« Աւրեմն երբ պիտի երթաս : »

« Եկող շաբթու , մարտի հինգ
 կամ վեցերորդ օրը հոն պիտի գլա-
 նուիմ : »

« Եւ ինծի , հայրիկ » , պօռաց
 Եդուարդը , որն որ խօսակցութեան
 ժամանակ եռանդով մը մէկունն մէ-
 կային կը նայէր , « ես ալ մէկ տեղ
 պիտի գամ : »

« Կերթաս » , ըսաւ Պ . Սիդօնը ,
 ես ծովէ պիտի անցնիմ : »

» Ո՛հ ես ծովը կը սիրեմ և դուն
 ինծի տեղ մը պիտի տանէիր ո՞ւր է : »

» Ինանկ չէ հայր , հէ՛ մայրիկ : »

» Եղէկ » ստուգիւ ես ասանկ
 խոստմունք մը ըրած եմ , բայց երբ
 երթալս չըսի , դուն տակաւին շատ
 պզտիկ ես ճամբան կը հոգնիս : »

» Ո՛չ , հայրիկ , հոգ մ'ընէր , քե-
 ղն նեղութիւն չեմ տար , Յակոբոսը
 քեզի հետ պիտի գայ , զիս ան կ'որ-
 նամէ : »

Պ . Սիդօն վայրկեան մը կանկ ա-
 ռաւ . իր պզտի Եդուարդը շատ կը
 սիրէր և կուգէր ալ որ զանի ճարտա-
 րութեան ու քաջասրտութեան մէջ
 կրթէ , ուստի թէև պզտիկ էր , բայց
 տանկ սրտահոլութիւն մը դարձեալ
 ուշ ձեռք ձգուելուն համար , հա-
 ճեցաւ տանելու :

Ճամբորդները կրէյվսընաէն նաւը
 պիտի մոնէին , Ընդուէրբի թղթա-
 տար նաւով :

Որոշուած օրը Պ . Սիդօնին դրա-
 նը առջեւը թղթատարի կառք մը
 եկաւ առաուն կանուխ որ զանոնք
 երթալու տեղերնին տանի :

Սարտի սկիզբը մէկ գեղեցիկ տաք
 առաւօտ մըն էր , Պ . Սիդօն կառքին
 մէջ մտաւ , և մէկ հաճելի ճամ-
 բորդութիւն մը գուշակելով , շու-
 տով դարձ մը խոստացաւ :

Եդուարդ իր վերջին համբոյրը
 տուաւ , մօրը հետ գրկախառնելով ,
 ու կառքին մէջ հօրը քով նստաւ :

Պիտէ մը աւելի ճամբայ ընել-
 նէն ետեւ , հաշիւու ու հեւալու
 ձայն մը լսուեցաւ կառքին մէկ կող-
 մէն . Եդուարդ՝ գլուխը պատուհա-
 նէն դուրս հանեց , « հայրիկ » , պօ-
 ռաց , « խեղճ Գարլօ շնիկնիս ետեւ
 նուս կուգայ կոր : » Իրան կըսէս ,
 ուրեմն մեկտեղ առնենք , ըսաւ հայ-
 րը . վասն զի հիմա չենք կրնար ետ
 խրկել , այսպէս կառքը կայնեցաւ ,
 և Յակոբոս՝ Գարլօն կառքէն ներս
 դրաւ :

(Պիտի շարունակութիւն)

ԶԱՐԲԱՆԱԼԻ ՀԱՆՐԱՔ ՄԸ

Երբեմն խորամանկութիւնը ստատիկ ջօրութեան
 կրնայ յայցթել :

Հնդկաստանի առաջին իշխաննե-
 րուն մէջ երբեմն ամէնէն հզօրը Քի-
 ռան Ռաճան էր . որուն՝ առաւել
 պատիւ կը նէին թէ Լըբեւեթան և
 թէ Լըբեւմոեան մասին բոլոր Ռա-
 ճանները բաց ՚ի Չինաց Ռաճայէն ,
 Երբոր Քիռան խմացաւ որ Չինաց
 Ռաճան իրեն անհնազանդութիւն
 կընէ , հրաման ըրաւ որ մէկէն անթիւ
 զօրք ժողովրդի , ու բանակներ կազմուի
 անոր երկիրը երթալ զանի նուաճե-

լու համար : Իսկոյն հրամանը 'ի դործ
դրուեցաւ . ինքը անձամբ ամէն տեղ
անհամար յաղթութիւններ ընելով
հասաւ Չինաց սահմանը :

Երբոր Չինաստանցիք իմացան որ
Քիւան Ռաճան Չինաստանի սահ-
մանին մօտեցած ու արդէն 'Իամ-
սաքի երկիրն ալ առէր է , այն ատեն
Չինաց Ռաճան անհնարին երկիւղի
մէջ ինկալով իր բոլոր պաշտօնեայնե-
րուն ու մանտարիններուն խորհուրդ
հարցնելով ըսաւ . “ Ի՞մ հաւատարիմ
” պաշտօնեայնեքս գիտէք որ այս օ-
” րերս Չինաստանը ինչ նեղութիւն
” կը կրէ , ահա՛ Քիւան Ռաճան իմ
” տէրութիւնս ջնջել կ'սպառնայ .
” ուստի դուք որ իմ խորհրդական-
” ներս էք ձեզի կը յանձնեմ ատոր
” մէկ ճարը գտնել : ”

Այն ատեն խորհրդականներուն
մէջէն մէկը կայսեր խոնարհելով ը-
սաւ . “ Վեհափառ Տէր , հրաման
” տուր ձեր ծառային որ առանց կա-
” թիւ մը արիւն գետինը թափել
” տալու յաղթէ անոր զօրութեւր : ”

Այս բանիս վրայ տէրութենէն
հրաման առնելով դուրս ելաւ , և
անմիջապէս նաւ մը պատրաստեց ու
մէջն ալ բարակ ժանգոտ ասեղներով
բեռնաւորեց ու քիչ մ'ալ անզուոյն
ծառերէն անկեց ու նաեւ նոյն երկ-
րին ատամնաթափ ծերերէն մէկ քա-
նին մէջը դրաւ , ու նաւը ուղղեց
դէպ 'ի 'Իամսաքու երկիրը :

Նաւը քիչ օրէն հասաւ թըշ-
նամեաց բանակը ու երբոր Քիւան
Ռաճան իմացաւ որ Չինաստանէն
եկած է . սկսաւ անոնցմէ տեղեկու-
թիւն առնել իրենց երկրին ընդար-
ձակութեանը և որպիսութեանը վը-
րայօք , անոնք ալ միաբերան պատաս-
խանեցին թէ “ երբոր մենք նաւը
” մօտնք ամէնքնիս ալ աշխոյժ երի-
” տասարդ անձինքներ էինք . սակայն
” այս օրուան օրս ամէնքս ալ տկար

” ծեր ենք , ու ակռայներնիս ալ
” թափած . ու այն անսահման Ովկի-
” անոսներուն մէջ մեր կեանքը զու-
” հելով ու մեր երկրին գեղեցիկ կա-
” նաչութենէն զրկուած , ասկէ 60
” տարի առաջ նաւերնուս մէջէն գը-
” տանք մէկ քանի ծառայ սերմը ու
” ցանեցինք . ահա՛ նոյն սերմերն են
” որ հիմա ծառ եղած են ու շատ
” անգամ ալ մեզի պտուղ տուին : ”
Յետոյ բաղմաթիւ ժանգոտ ասեղներ
ցուցընելով ըսին . “ Երբոր մենք մեր
” բնակած տեղէն այս երկաթներս
” նաւը մոցուցինք որ ուրիշ երկիր
” վաճառականութիւն պիտի ընէինք
” ատոնց ամէն մէկն ալ տաան երկու-
” քական ոտնաչափ երկայնութեամբ
” փայլուն գաւազաններ էին . բայց
” հիմա ժանգը զանոնք շատ մաշե-
” ցուցեր է . վերջապէս մեր ճանա-
” պարհորդութեան փարուան սկիզ-
” բը չենք գիտեր . բայց դուք մեր
” պատմածէն կրնաք մակաբերել : ”

Այս խօսքերուն վրայ Քիւան
Ռաճան քիչ մը մտածելով ըսաւ .
“ Թէ որ այս պատմութիւնը ճշմա-
” րիտ է , ապա անոնց երկիրն ալ
” խիստ շատ ընդարձակութիւն ու
” նեցած պիտի ըլլայ , որ մեզ անկա-
” րելի է քիչ ատենէն հոն հասնիլ : ”
Իմաստութիւնը մօքի դրած անկարե-
լին , ուրանալն է . յետոյ հրամայեց
որ իւր բոլոր բանակը իրենց վեճակը
վերագառնան :

ԲՆԵԿԸՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Արաբացի եւ տաճիկ ուղտ :

Թէ որ Աստուածային Նախախնա-
մութիւնը Ասիոյ և Ափրիկէի անա-
պատներուն մէջ ուղտը բնիկ ըրած
չըլլար , Արաբացին չպիտի կարենար
մինչեւ այս ժամանակ իւր աղատու-
թիւնը պաշտպանել , որով ինքը կը

պարծի։ Կառավարներուն անցուդարձը մէկ քանի փոքր ճամբաներու վրայ պիտի կայանար, և բանուկ երկիրնե-
րու մէջտեղ եղած այն աւազէ ծռ-
վերը մարդոց անմեքձենալի պիտի լը-
լային։

Արաբացի ուղտին արագութիւնը
շատ զարմանալի է. հինգ վեց կենդի-
նառ բեռ վերցընելով, իր սովորական
ընթացքը արշաւող ձիու մը արագութե-
անը հաւասար է. վեց փամ եօթը
օր այս արագ ընթացքը անընդհատ
շարունակելով 300 փարսափս հեռա-
ւորութեամբ անց կերթայ։ Կր պատ-
մըվի թէ երկուստարդ Արաբացի աղջիկ
մը ամուսնանալու ժամանակը յան-
կարծ հիւանդացաւ և իր խելաց-
նօրութեան ատենը իւր չորցած բե-
րանը զովացնելու համար նարինջ մը
ուտելու սատիկ փափաք մը ունե-
ցաւ. «Թէ որ չուտեմ նե՛ անշուշտ
կը մեռնիմ» ըսելով։ Բայց քաղաքին
մէջ ամենեւին նարինջ չկար, ուստի
գտնաւ համար կը հարկադրուէր
մինչեւ Սարօք ըսուած քաղաքը եր-
թալ, որ գրեթէ 35 փարսափս հեռա-
ւոր։ Իր փեսայացուն առտուանց կա-
նուխ իր սիրելի ուղտին վրայ կը հեծ-
նայ և Սարօք կերթայ. բոլոր ճամ-
բուն մէջ կենդանիին եռանդը աղդու-
խօսքերով դրդուեցնէ չէր դադարէր.
և այս հաւատարիմ կենդանին իրիկ
ուան մօտ իր տէրը քաղաքին ստոր-
աը հասուց. դուռները դոց բլրաւուն
գիշերուան պահապաններէն մէկը նա-
րինջները անոր տալով, այն մահուան
մօտ երկուստարդ աղջկանը հասցուց
ու զանի մահունէ ազատեց։

Երեք չորս տարիի չափ կայ որ այս
Արաբացի ուղտը Իտալիա ալ մտաւ,
ուրտեղ իր յաջորդութիւնը չէ դադ-
րած. սակայն անոր ցեղին բնութեա-
նը մէջ փոփոխութիւն մը կը տես-
նուի, և զանի իւր նախնի բնութե-
նէն տղափոխուած կրնայ համարիլ։

Աս Իտալացի ուղտերուն և դու-
ւառախան ձիերուն մէջ համալրու-
թիւն մը ծագելը դիտելը է. բայց
շատ զգուշութիւն պէտք է զանոնք
մերձակայութեամբ և իրենց նախան-
ձելի կողերուն տեսութիւնը սովոր-
եցնելը։ Երբոր օտար ձիու մը ու-
ղին ուղտ մը բերվի, իր մաղերը կը
ցիցէ, ականջները կը տնկէ, կը դու-
ղայ, սոքը գետինը կը զարնէ, ու
սանձը իր ակուններուն մէջը առնե-
լով ետ ետ կը փախչի։ Ասից մէջ ա-
սանկ չէ, ուրտեղ մարդոց ծառայու-
թեանը համար այս երկու կենդանի-
ները ընկերացած են, և ընկերաբար կը
ճանապարհորդեն։ Ասից մէջ իրենց
բարի զգացումը ընդհանուր կենաց
ժառանգական իրաւունց սեփականա-
ծ են, որուն սկզբնաւորութիւնը շատ
տարիներէ ՚ի վեր ասոր իբր ապա-
ցայ Հեռօսօթի մէկ պատմութիւնը
կրնեն, որուն մէջ այս պատմիչը կը
պատմէ թէ Վիւրոս մէկ օրինուոր
պատերազմի մը մէջ Քուիւսիւզին
սոսկալի հեծելադուռները կատարելա-
պէս յաղթեց ընդհանրապէս պաշար-
ները կրելու յասկացեալ ուղտաւոր
զինուորները յառաջ անցուց։ Քուիւ-
սիզի բանակին ձիերը աս անձանցով
թշնամիները տեսածնուն պէս ցրուե-
ցան ու փախան, ասկից կրցան մա-
կաբերել թէ Վիւրոսի ժամանակը ձին
և ուղտը տակաւին մաերմաբար ըն-
կերութիւն մը չէր ունեցեր։ Առա-
ջին անգամ երբոր Եւրոպացի մը Ա-
րաբացի ուղտի մը վրայ հեծնար, ա-
նոր սովորութեանը համեմատ ծունկ
չօքելով՝ ինչպիսի մեծ վտանգին մէջ
կ'ընայ, փսն զի կենդանին ուղեւով
ճամբայ ելլալ իր ետեւի ոտքներուն
վրայ կըլէ իմանալու համար թէ արդ-
եօք ճանապարհորդը իր դամբին վրայ
է. ետքը իր առջևի ոտքներուն վրայ
կը շտկովի. առանկով հեծնողը նախ
և առաջ ետք նետուելով գժուար

կըլլայ այս կրկին մղմանը դէմ զինքը բռնել:

Պարոն Սաքֆաուլտն իրեն՝ ուղտին վրայ նստելուն պատմութիւնը աւսանկ կ'ընէ. « Կենդանւոյն առաջին շարժմանը դէպ 'ի առաջ Գլտորեցայ, կարծելով թէ հեծած նոր կենդանիս ձիու պէս իր առջևի ոտմէքուն վրայ կը շահուի: Բայց ընդ հակառակը եւ լաւ որ կենդանին գլխովն ու աւ կանջներովը տակը ինկաւ, քովը գլու նուող մարդոց մեծ խընդալ մը պատճառելով:

Ուրիշի անուամբ ուրիշ Եւրոպացի մ'ալ Եւրաբացւոցմէ գերի ըլլալով, մեծ ուղտի մը վրայ հեծցուցին. զինքը որչափ որ ուժով բռնեցնէ չի

կրցաւ անոր կրկնակի ցնցմանը դէմ դնել. և ասանկով վրան դառնալով դէպ 'ի ետևի կողմը գլորեցաւ: « Վիւրաւորեցա՞ք մի, » ըսաւ տէրը, բարեբաղդաբար բան չեղայ ըսաւ Լաւրոպային: « Եստուած ձեզի պահեց, պատասխանեց Եւրաբային, վասն զի թէ որ գլխի վայր իյնայիր գլուխդ աս քարերէն պիտի ջախջախուէր. բայց այս ուղտը օրհնեալ կենդանի է, և աստուած անոնց վրայ նստողները կը պահէ. թէ որ էշէ մը վար իյնայիր օրն որ ասկէց իրեք անգամ պըղտիկ է, գլուխդ անմիջապէս կը պատուէր, բայց գիացիր որ ուղտը օրհնեալ կենդանի է: »

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ՈՒՍՈՒՄ ՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Չգայարանքը հինգ է.

Տեսնելիք, լսելիք, հոտառելիք, ճաշակելիք և շօշափելիք:

Ասոնց զօրութեանը զգացմունքը կ'ըսվի. և իւրաքանչիւրը առանձին յատուկ առարկայ ունին որ կը զգան:

Կերպարներէ ալ ցուցմունքները այսինքն (ուէրիմի) երեւոյթները աչաց առարկայներն են, որ նկարագիր կամ կերպաւոր գաղափար կ'ըսվին. միւսները անկերպ անձեւ գաղափարներ են. զօրօրինակ՝ հոտը, հոտառելեաց առարկան է. համը, ճաշակելեաց առարկան է. ձայնը, ակամջին այսինքն լսողութեան առարկան է. ջերմը, ցուրտը, խոնաւը չորը, ծանրը թեթեւը, հաստը բարակը, ասորք ալ շօշափելեաց առարկան են: Մարմնոյն բոլոր տարածութիւնն ալ աս շօշափելեաց զգայարանքին հետ ազգակից են ու շօշափելեաց առարկայները կը զգան:

Երեք կերպ զօրութիւն կամ կարողութիւն կայ ուղեղին մէջ.

Ա. Միտք. Բ. Յիշողութիւն. Գ. Երեւալկայութիւն:

Կերպարներէ ցուցմունքները որ նկարագիր գաղափար կ'ըսվին, ու տեսնելեաց ալ առարկայներն են, միայն երեւակայութեան մէջ կը տարբորվին աչքէ անցնելով:

Աննկարագիր գաղափարները որ անկերպ ըլլալեացմունքներ են, զօրօրինակ՝ համը, հոտը, ձայնը

ու նաեւ շօշափելեաց առարկայները, յիշողութեան մէջ կը տարբորվին անոնց սեպհակոն յատուկ զգալարանքներէն ներս անցնելով: Նոյն յիշողութեան մէջ աննկարագիր տարբորմանը ծանօթութիւն կ'ըսվի. երեւակայութեան մէջ տարբորութիւն կերպաւոր ցուցմունքներուն ալ գաղափար կ'ըսվի:

Միտքը իր բնութեան մէջ գաղափար ու ծանօթութիւն չունի:

Երեք կերպ զօրութիւն ունի.

Ա. Զօրութիւն Եւրոպութեան.

Բ. Զօրութիւն Ճանաչման.

Գ. Զօրութիւն Դատման:

Չգայմունքներուն առարկայները ծանուցեալ են. նոյն ծանուցեալ զգացմունքներէն անձանց թից յայտնութիւնը գուշակելուն իմացմունք մտաց կըսվի, որ միտքը զանոնք ճանաչումք կ'ընարէ. ընտրութեամբն ալ կը գտտէ. զօրօրինակ ահանջը ձայն մը կը լսէ, յետոյ միտքը կը ճանաչէ. որ աննկարագիր ծանօթի ձայն է, զօրութեան ընտրութեամբն ալ համարները, ժամանակը և օրը կը նայի և անոնց համեմատ կը գտտէ: Ուստի մտաց գործը ծանուցեալով անձանց թից մակարեքելն է. զօրօրինակ՝ ծանուցեալ կամ թիւով վերնայարկին աղւսին անձանց թից կոտրած ըլլալը իմանալը մտաց գործն է: Գիշերման ծանուցեալ եօթն անգամ թիւթիւնի զարնալէքն Պօլսին անձանց թից հրդեհը մակարեքելը կամ գուշակելը մտաց գործն է: Ծովուն վրայ հեռուէն տեսնուած նաւուն ծանուցեալ պղնձին երեւոյթին կէսէն չափ վերը ջրին վրայ ըլլալով, ներսի անձաւ

նօթ պարապութիւնը անոր մէջ չը մտած մակարե-
րելը մտաց գործն է :

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ագ համեղուն կերպը :

Ճովուն ջուրը շատ աղի է . աս աղը հանելու
համար ծովուն եզերքը քիչ խորութեամբ փսեւր կը
բանան ուր կը լեցունեն ծովուն ջուրը : Արեւուն
ճառագայթներուն ջերմութենէն ջուրը կամայ կա-
մայ գոլորշի կը դառնայ և աղը օդին մէջ չը կրնալ
ցնդելուն համար, թանձրացած կը մնայ : Երբ բնա-
կանաբար եռալով կ'ընկնի ալ աւելի կարծրանալ,
ծայրը տախտակի կտոր մը հաստատած ձողով զանի
կը կտրտեն, և յետոյ գէլ գէլ կը գնեն շրջընե-
լու համար : Բայց աս վիճակին մէջ հալային մասունք-
ներ ունի իր մէջը :

Ուտի երբ զանի մաքրել հարկ ըլլայ, ջրով
կաթնայի մէջ կը լեցնեն և կ'եռարնեն մինչեւ
որ բոլորովին ջուրը գոլորշանայ . խառտեն աղը որ
տակը կը մնայ, ձիւնի պէս ձերմակ է :

Աղը կը հանեն նաեւ աղային ակունքներէ . բայց
որովհետեւ ասոնք ծովուն ջրէն քիչ աղ կը պարու-
նակեն, պէտք է հրով ջուրը գոլորշացնել : Գետնին
տակն ալ շատ ու մեծամեծ կտորներ կան աղի :
Արկա հանքային աղ կրօնի, որ շատ մաքուր ու
սպիտակ կըլլայ . և զանի գործածելու համար բա-
ւական է ջաղացէ անցընելով փոշիացնել :

Դերձակ եւ գնտակ :¹

Դերձակին մէկը սովորութիւն ըրեր էր իր խա-
նութին առջեւէն ամէն մէկ անցած մեռելին գըն-
տակի մը մէջ մէյմէկ քար ձգել . օր մը ինքն ալ մեռ-
նելով իր բարեկամներէն մէկը նոյն գնտակին մէջ
քար մը կը ձգէ ու ամէն հարցընդոնքուն ասանկ կ'ը-
սէ . « Դերձակ բարեկամին աս օր իրեն գնտակին
մէջն է ինկեր : »

Պօռեցոց հայախօս տառածները :

Թուխ աչուին մօրուց պէտք է,
զարգարուածը թեկ կաւրի .
Ով որ երկիրի պտուղ կը նայի,
անոր երկան շիրիք պէտք է,
Էշն է դրէր իր միտքին,
իր տապալկը իր ճիտին .
Կառուն ունի հաց ու պանիր,
գիշերը քունը շիտանիր .
Ես աղայ դուն աղայ, տէրիմէն ով աղայ .
Ասորդին երեւր թաքեր են,
անձրեւ կազայ ըսեր է,
Դուն եղար գեղիս ըռէիզ,
մոխիրն եկաւ վրայ գլուս .
Խենդը չարիւր են, ճիւղըր ցաւեր է :

¹ Խաւմայրա :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

Ջգուշութեամբ ընտրէ ան մարդը, որու որ
քու մտքիդ գաղտնիքները կը յայտնեն :

Սագերէն զգուշացիր, երբ աղուէսը կը քարո-
ղէ : Աղէկ է տաքով քան թէ լեզուով սահիլ :

Նոխանձը՝ ծննդեամբ բանտապետ, ու արհես-
տով դահիճ է :

Առանց խորհուրդի փորձառութիւնը երեւա-
կայութեան ցնորքն է :

Չափազանց զգացողութիւնը նորեւեկ կատարե-
լագործութեանց ունայնութիւնն է :

Արժնաւթիւնը ճշմարտութեան կենդանի պատ-
կերն ու մեծ սուրհանդակն է :

Մարտ ամսուն համեղուն կին շուծումը :

Մարտ ամսուն հանելուկին Տաբէ էր . որուն
ստանաւոր լուծումը նամակաւ մը ուղղած է մեղի
Մեծասպառիւ Նորատունկեան Յակոբ աղային որդին
Յարութիւն աղան, որն որ մեծ սիրով կը փութամբ
զանի հրատարակել հօս իր նամակովը մեկտեղ :

Արժանայարգ անդամք Մեսրոպեան ընկերու-
թեան :

Մարտ ամսուն Ապրիլի Արեւելեան պատուական
օրագրին միջոցաւ հրատարակած հանելուկները Տաբէ
կը նշանակէ, որուն ստանաւոր բացատրութիւնը
սոյն նամակաւ ձեր Անուութեանցը կը խրկեմ, որ
եթէ արժան համարիք զանի յաջորդ թերթերնուդ
մէջ հրատարակել մեծ պատիւ կը համարիմ նուա-
սութեանս :

Ունիմք այն ամէնուն քով,
Այն սանդուխը շորս տարերքով,
Ուր կենտունակք սիրով կըրկին,
Կիջնեն կ'իլեն նոր շըրջանին .
Ճարտարապետք են այսոքիկ
Չորս եղանակք Տաբէյն միջիկ,
Ամառ, գարուն, ձմեռ, աշուն,
Սարգուս կենաց շատ սիրտուն
Եթ' նեակըն է, այն, միայն,
Եւ անդամս հաշիւըն այն :

Մ'նամ Անուութեանց ձերում միշտ
բարեկամ

1855 մարտ 9

Յարութիւն
Յ. Նորատունկեան :

ՀԱՆԵԼՈՒԿ

Քաղաք մի եմ պարբերաւոր,
Յոյժ քարաժայռ բայց բեղմնաւոր,
Իմ գոյնովս ըսկեցայ նեւ
Աստ կը ցանկան շատ դորաւոր :